Այս է հանգիստ Խոնդքեկուն, դուստր Ախիճանին, կողակից Կոստանտէլին և տէր Վելիճանին. յիշեցէք ի Քրիստոս յԱստուծոյ. թվին :ՋԿԱ: (1512):

*Հրատ. Բարխուդարեանց, 67։*

## 68. ՀԱԴՐՈՒԹ ԳՅՈՒՂ

***680.* *ԳՅՈՒՂԱՄԻՋԻ մեծ եկեղեցու ներսում, որմնամույթի վրա. 1 տող.***

ԹՌԾԲ

ԹՎ[Ի]Ն[Ի] :ՌԾԲ: (1653):

Ծանոթ. *Բարխուդարյանցն ունի ԹՎ ՌԾՀ։ Իսկ Ջալալեանցը՝ 1702։*

*Հրատ. Բարխուդարեանց, 68։ Ջալալեանց, II, 263։*

## 69. ԹԱՂԱՍԵՌ ԳՅՈՒՂ

*Գյուղը նոր է. հինը գտնվում մոտ 5 կիլոմետր հեռու, բարձրության վրա. այստեղ ավերակների մեջ մնում է XVI—XVII դարերին վերաբերող մի կիսափուլ եկեղեցի, որը եղել է թաղածածկ. որա պատերի մեջ ագուցված կան մի քանի փոքր խաչքարեր. մկրտության ավազանի մոտ եղածների վրա կա երկու արձանագրություն։*

***681.*** ԽԱՉՍ ՀՌՈՒՄԻՆ

Խ աչ Ս
Հ Ռ ՈՒ Մ
ԻՆ

***682.*** ԽԱՉՍ ՂԱՍՈՒՄԻՆ

Խ աչՍ
Ղ ա ս ՈՒ
ՄԻՆ

***683.* *ԳՅՈՒՂԱՏԵՂՈՒՑ ներքև, գետակի վրայի կամուրջի հյուսիսային ոտքի արևելյան երեսին, երկու քարերի վրա. 7 տող.***

ՅԻՇ+ԱՏԱԿԷԳՄ
ՄՈՒՃՍՅԱՊՈՆ
ԵԿԱՆԻՌԴԴՊԱՂՏ
ՍԱՐԻՆԿՈՂԱԳՅՓԷՐՈՆ
ԹՎԻՆ ՌՄԺԲ ՈՒՆ

ՄԻ ԲԵՐԱՆ
ԱԾ ՈՂՈՐՄ

ՅԻՇԱՏԱԿ Է ԳԱ[Ր]|ՄՈՒՃՍ ՅԱՊՈՆ| ԵԿԱՆԻ ՈՐԴԻ ՊԱՂՏ[Ա]Ս[Ա]ՐԻՆ ԿՈՂԱԳԻՑ ՓԷՐՈ[Ւ]Ն| ԹՎԻՆ :ՌՄԺԲ: ՈՒՆ (1763)։ |ՄԻ ԲԱՐԱՆ ԱԾ. ՈՂՈՐՄԻ [Ա]ՍԷՔ]:

Ծանոթ. *ՅԱՊՈՆ վերծանությունը կասկածելի է, թերևս պարոն։*

## 70. ԿԱՐՉԱԲԱՉԱՐ

*Այս գյուղը գտնվում է Հադրութից դեպի Ֆիզուլի քաղաքը տանող ճանապարհի վրա՝ Ադրբեջանի սահմանի մեջ։*

*Գյուղամիջում, այժմ էլ գործող հին ճանապարհի եզրին, գրեթե ամբողջական վիճա-*